ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ք. Երևան **00.00.0000թ. ժամ 00;00**

Ա/Ձ Խաչատրյան Մերուժան այսուհետ՝ Վարձատու, ի դեմս
(կազմակերպության անվանումը)

որը գործում է ----------
(ազգանունը, անունը, պաշտոնը) (կանոնադրության, լիազորագրի)

Հիման վրա մի կողմից **և**
(ազգանունը, անունը)
մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասիմ:

I. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով՝ Վարձատուն վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանն և օգտագործմանն է հանձնում տրանսպորտային միջոցը:

1.2 Տրանսպորտային միջոցի բնութագիրը՝

ա) տրանսպորտային միջոցի մակնիշը՝
բ) թողարկման տարեթիվը՝
գ) հաշվառման համարանիշը՝
դ) գույնը՝
ե) Բենզին ----------,
զ) Վազք . ----------,
----------,

1.3 Տրանսպորտային միջոցը Վարձատուին է պատկանում----------սեփականություն----------

(**սեփականության**, վարձակալության)

Իրավունքով , ինչը հաստատվում է հետևյալ փաստաթղթերով՝

----------վարձակալություն---------- ----------

(առուվաճառքի պայմանագիր, սեփականության վկայագիր և այլն)

II. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1 Հսկողություն իրականացնել Վարձակալի կողմից Տրանսպորտային միջոցի օգտագործման նկատմամբ.

2.1.2 Վարձակալից պահանջել՝ Տրանսպորտային մաիջը օգտագործելու սույն պայմանագրի պայմանների և դրա նշանակությանը համապատասխան.

2.1.3 եթե Վարձակալը Տրանսպորտային միջոցից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամապատասխան, ապա պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները.

2.2 Վարձատուն պարտավոր է՝

2.2.1 սույն պայմանագիրը ստորագրելու պահից----------1 մեկ ----------
(թվերով և բառերով)
օրվա ընթացքում Տրանսպորտային միջոցը հանձնել Վարձակալին.

2.2.2 Տրանսպորտային միջոցը հանձնել վարձակալին սարքին վիճակում՝ դրա նշանակությանը համապատասխան շահագործելու համար.

2.2.3 Վարձակալին հանձնել տվյալ Տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագիրը և մյուս փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են դրա օգտագործման համար.

2.2.4 Վարձակալի պահանջի դեպքում անհատույց վերացնել Տրանսպորտային միջոցի թերությունները կամ համաչափ իջեցնել վարձավճարը:

2.2.5 Վարձակային տրամադրել Տրանսպորտային միջոցը վառելիքով ամբողջովին լի:

2.3 Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1 պահանջել վարձատուրից՝ սույն պայմանագրի **2.2.1.** կետում սահմանված ժամկետում իրեն տրանադրել Տրանսպորտային միջոցը.

2.3.2 պահանջել վարձատուից՝ իրեն տրամադրելու Տրանսպորտային միջոցի պատկանելիքները և փաստաթղթերը.

2.3.3 պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, դրանց համար ինքը պատասխանատվություն չի կրում, Տրանսպորտային միջոցի վիճակը վատթարացել է.

2.4 Վարձակալը պարտավոր է՝

2.4.1 ժամանակին վճարել վարձավճարը՝ սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով և պայմաններով.

2.4.2 Տրանսպորտային միջոցի վարձակալության ողջ ժամանակահատվածում այն պահպանել պատշաճ վիճակում, ներառյալ՝ ընթացիկ վերանորոգումը.

2.4.3 Տրանսպորտային միջոցի վարումը և դրա առևտրային ու տեխնիկական շահագործումն իրականացնել իր ուժերով,

2.4.4 Տալ իր համաձայնությունը վարձակալության ժամանակահատվածում կատարված բոլոր վարչական իրավախախտումները վերահասցեավորել իր հասցեով..

2.4.5 Տրանսպորտային միջոցը վարելու ընթացքուն ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու դեպքում, կատարել Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենքի պահանջները.

2.4.6 Տրանսպորտային միջոցով Հայաստանի Հանրապետության սահմանից դուրս գալու դեպքում տեղիակ պահել Վարձատուին:

2.4.7 պայմանագրի դադարեցման դեպքում 2 (երկու) օրվա ընթացքում
(թվերով և բառերով)
Վարձատուին վերադարձնել Տրանսպորտային միջոցն այն վիճակում, ինչպես այն ստացել է՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

2.4.8 Վարձատուին վերադարձնել Տրանսպորտային միջոցը՝ վառելիքով ամբողջովին լի:

III. Վարձավճարը

3.1 Սույն պայմանագրով՝ Տրանսպորտային միջոցի վարձակալության համար վարձավճարը կազմում է ----------դրամ

3.2 օրը

3.3 3.1 կետում նշված գումարը ենթակա է վճարման միանվագ՝ պայմանագիրը կնքման պահին:

IV. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Տրանսպորտային միջոցով, դրա մեխանիզմներով, համասարքերով երրորդ անձանց պատճառված վնասի համար, օրենքով սահմանված կարգով, պատասխանատվությունը կրում է Վարձակալը:

4.2 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.3 Սույն պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

V. Այլ պայմաններ

5.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կամ նրանց լիազորված ներկայացուցիչներիկողմից ստորագրման պահից և շարունակում է իր գործողությաունները-----00.0.0000՝թ մինչև 00.00.0000թ ----------ընթացքում:

(նշել ժամկետի սկիզբը և վերջը)

5.2 Սույն պայմանագիրը և պայմանագրի հավելվածը՝ Տրանսպորտային միջոցի հանձնման և ընդունման արձանագրությունը կնքված է հայերեն և անգլերեն լեզուներով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.3 Սույն պայմանագրում բոլոր փոփոխությունները և լրացումները պետք է կատարվեն կողմերի համաձայնությամբ՝ գրավոր համաձայնագրով, որը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մաս

5.4 Սույն պայմանագիրը իրավաբանական ուժ ստանալու համար պետք է ստորագրվի Կողմերի կողմից: Պայմանագրի դադարման հիմքերը սահմանվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

VI. Կողմերի հասցեները և ստորագրությունները

Վարձակալ	**Վարձատու**
	Ա/Ձ Խաչատրյան Մերուժան
(ազգանունը, անունը)	(ազգանունը, անունը
	Ռուսթավելի 25
	(հասցե)
	ՀՎՀՀ 35030601
անձնագրի սերիան, ե՞րբ և ու՞մ կողմից է տրվել)	(անձնագրի սերիան, ե՞րբ և ու՞մ կողմից է տրվել)
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)